

# ԱԿՐՈՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԿԱԶ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի ղոցենս,  
տնտեսագիտության թեկնածու

## ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնի հայցորդ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ՂԵՐԲ

## ՀՀ ԶԱՐԳԱՑՄԱՆ

## ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների շարժնորածի վերուժությունը, տնտեսական աճի մոդելավորման և տեսական հիմնադրության ամրապնդումը քույլ են տալիս եզրակացնել, որ հավասարակշռված, կայուն տնտեսական աճի ապահովման համար անհրաժեշտ է իրականացնել խնայողությունների նորմի օպտիմալացում, ներդրումների իրականացում ոչ միայն բարձր տեխնոլոգիաների ներմուծման, այլև մարդկային կապիտալի կուտակման և համրապետության ենթակառուցվածքների զարգացման ուղղություններով:

**Հիմնարարեր.** զարգացման գերակայություններ, Ձինի գործակից, հավասարակշռված տնտեսական աճ, «ոսկե կանոն», խնայողությունների նորմի օպտիմալացում, մարդկային կայսիության ենթակառուցվածքների զարգացման ուղղություններով:

ՀՀ տնտեսության զարգացման գերակայություններն իրենց արտացոլում են գտել վերջին տարիներին Կառավարության ընդունած երեք երկարաժամկետ ծրագրերում:

«Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը» (ԱՀՌԾ) ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է 2003 թ. օգոստոսին և ներառված է 2003–2015 թթ. ծրագրային ժամանակահատվածը: Դա, ըստ էության, անկա-

խության ծեռքբերումից հետո ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման առաջին երկարաժամկետ ռազմավարական ծրագիրն էր<sup>1</sup>:

Ծրագրի հիմնական նպատակը նյութական աղքատության նշանակալի կրծառումն էր: Ըստ ծրագրի՝ նախատեսվում էր աղքատության մակարդակը 2015 թ. հասցնել 19,7 տոկոսի, իսկ ծայրահետ աղքատության մակարդակը՝ 4,1 տոկոսի՝ 2001 թ., իամապատասխանաբար, 50,9 և 16,0 տոկոս ցուցանիշների փոխարեն:

ԱՀՈԾ հիմնական նպատակների նման ընտրությունը պայմանավորված էր նյութական աղքատության լայնածավալ տարածվածությամբ, աղքատների՝ երկրի տնտեսական, սոցիալական և քաղաքական կյանքին անբավարար մասնակցությամբ, նրանց «ձայնագրկությամբ», ինչպես նաև այն հանգամանքով, որ բնակչության շուրջ կեսի աղքատ լինելու փաստը լուրջ վտանգ էր ներկայացնում հասարակության կայունության և հետագա տնտեսական ու սոցիալական զարգացման համար:

2008 թ. այս ծրագիրը վերանայվեց և ընդունվեց 2008–2021 թթ. «Կայուն զարգացման ծրագիրը» (ԿԶԾ)<sup>2</sup>: Նոր ծրագրի ընդունումը պատճառաբանվում էր մի շարք հանգամանքներով: Նախ՝ 2003–2006 թթ. տնտեսական աճի տեմպերը մոտ երկու անգամ ավելի բարձր էին նախատեսվածից: Պետության ծախսային հնարավորությունների աճը հանգեցրել էր այն բանին, որ միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարներում ԱՀՈԾ նպատակադրումները և հիմնական ցուցանիշների արժեքները կարող էին գերազանցվել, ինչը կտրուկ հցեցնում է ծրագրի իրատեսության աստիճանը:

Բացի այդ, ԱՀՈԾ վերանայման և ԿԶԾ մշակման անհրաժեշտությունը հիմնավորվում էր այնպիսի փաստարկներով, ինչպիսիք էին նյութական աղքատության չափման վերանայված մեթոդաբանությունը (2004 թ.), բացահայտված տնտեսական զարգացման նոր մարտահրավերները, որոնց դիմագրավելու համար անհրաժեշտ էր ճշտել կամ վերանայել պետության քաղաքականության և ծախսային գերակայությունները, ապահովել «երկրորդ սերնդի» բարեփոխումների հաջող ընթացքը և, վերջապես, կայուն զարգացման ծրագրի շրջանակներում մշակել և իրազործել ակտիվ տարածքային քաղաքականություն, որը նպատակադրում կլինի տարածքային զարգացման անհամաշավությունների նվազեցմանը:

Հետադարձ հայացք գցելով այս ծրագրի իրականացման ժամանակահատվածին՝ կարող ենք պնդել, որ նախատեսված ցուցանիշները չեն ապահովվել, վերը բերված փաստարկները հիմնավորված չեն, իսկ նոր ընդունված ծրագրում բոլոր նպատակադրումներն ու գերակայությունները նախորդի կրկնությունն են:

ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի որոշմամբ հաստատվեց 2014–2025 թթ. «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը» (ՀԶԾ)<sup>3</sup>: Դա ինչ-որ չափով վերադարձ էր ԱՀՈԾ-ին, քանի որ բոլոր գերակայությունները երկու ծրագրում էլ արտացոլված են: Ծրագրի նախաբանում Կառավարվության երկարաժամկետ զարգացման ռազմավարության գեր-

<sup>1</sup> Տե՛ս «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր»՝ հաստատված ՀՀ Կառավարության 2003 թ. օգոստոսի 23-ին:

<sup>2</sup> Տե՛ս «Կայուն զարգացման ծրագիր», հավելված ՀՀ Կառավարության 2008 թ. հոկտեմբերի 30-ի N 1207 Ն որոշման:

<sup>3</sup> Տե՛ս «Հայաստանի Հանրապետության 2014–2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր», հավելված ՀՀ Կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման:

Խնդիր է համարվում բնակչության բարեկեցության շարունակական աճը, որը ԱՀՌ-ի հիմնական նպատակն էր:


<i>2003–2015 թթ. «Աղքատության հաղթահարումն ռազմավարական ծրագիր»</i>	<i>2008–2021 թթ. «Կայուն զարգացման ծրագիր»</i>	<i>2014–2025 թթ. «Հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր»</i>
<b>Նպատակներ</b>		
1. Աղքատ բնակչության թվի կրճատում	Բնակչության բարեկեցության աճ և աղքատության հաղթահարում	Զբաղվածության ավելացում աշխատատեղերի ստեղծման ձանապարհով
<b>Գերակայություններ</b>		
1. Կայուն, արագ տեմպերով տնտեսական աճի ապահովում	Կայուն, արագ տեմպերով տնտեսական աճի ապահովում	Զբաղվածության ընդլայնում
2. Ակտիվ և բնակչության խոցելի խնճերի օժանդակությանն ուղղված նպատակային սոցիալական ու եկանտային քաղաքականության իրականացում	Ակտիվ և բնակչության խոցելի խնճերի օժանդակությունն ուղղված նպատակային սոցիալական ու եկանտային քաղաքականության իրականացում	Մարդկային կապիտալի զարգացում
3. Կառավարման համակարգի արդիականացում՝ ներառյալ պետական կառավարման արդյունավետության մայունավետության մակարդակի բարձրացումը և կարդալի պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ ընդլայնման ապահովումը	Կառավարման համակարգի արդիականացում՝ ներառյալ պետական կառավարման կարդալի բարձրացումը և պետության տրամադրության տակ գտնվող ռեսուրսային փաթեթի առաջանցիկ աճի ապահովումը	Կառավարման համակարգի ինստիտուցիոնալ արդիականացում
4.		Սոցիալական պաշտպանության համակարգի բարելավում

#### Գծապատկեր 1. *ՀՀ տնտեսության զարգացման երկարաժամկետ ծրագրերի հիմնական նպատակները և գերակայությունները*

Ինչպես տեսնում ենք, վերը նշված բոլոր ծրագրերում էլ տնտեսության զարգացման գերնպատակը աղքատության հաղթահարումն է և բնակչության բարեկեցության աճը, որը միանգանայն արդարացված է: Այս նպատակի իրականացման գերակայությունները նույնպես ծրագրերում նույնն են: Սակայն ժամկետային առումով դեռևս չավարտված ծրագրերի փոփոխություն-

ները, առանց հիմնավոր պատճառաբանության նոր ծրագրերի հաստատումը, դրանց հարմարեցումը ընթացիկ հիմնախնդիրների լուծմանը և նոր կառավարության նախասիրություններին, չի նպաստում այս նպատակի իրականացմանը: Դրա մասին են վկայում նաև ՀՀ տնտեսության զարգացման մակրոտնտեսական միտումների վերլուծության արդյունքները:

Տնտեսական աճի տեմպերը Հայաստանում, միջին հաշվով, շատ ավելի մեծ են եղել, քան զարգացող և, առավել ևս, զարգացած երկրներում: 2000 թ. ի վեր տնտեսական աճը Հայաստանում, համաշխարհային տնտեսության համեմատությամբ, մոտ 3 անգամ ավելի է եղել: Նոյնիսկ հետձգնաժամային տարիներին, միջին տարեկան տեմպերով, Հայաստանը առաջատարների շարքում է (2010–2014 թթ.: 4,2%): Ըստ գծապատկեր 2-ի՝ քննարկվող ամբողջ ժամանակաշրջանը կարելի է բաժանել երկու պայմանական փուլերի՝ 2000–2008 թթ. երկնիշ տնտեսական աճի (միջինը՝ 11,1%) և 2010–2014 թթ. համեմատաբար ցածր աճի ժամանակահատվածների:



Գծապատկեր 2. ՀՆԱ և սպառման աճի տեմպերը ՀՀ-ում 2000–2014<sup>4</sup> թթ.

Աճի և զարգացման նման միտումների շնորհիվ Հայաստանը Համաշխարհային բանկի դասակարգման սանդղակում ցածր եկամտով երկրների դասից տեղափոխվեց միջինից ցածր եկամուտ ունեցող երկրների խումբ: Տնտեսական աճի ապահովման առումով կարևոր դեր ունեցան առաջին սերնդի բարեփոխումները՝ տնտեսության զարգացմանը և շուկայական ենթակառուցվածքների ու ինստիտուտների ձևավորումը:

Սակայն վերը նշված երկու ժամանակահատվածները միմյանցից տարբերվում են ոչ միայն տնտեսական աճի տեմպերով, այլև բովանդակությամբ: Բանն այն է, որ 2000–2008 թթ. ընթացքում տնտեսական աճն ուղեկցվել է բնակչության 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ միջին տարեկան ծավալների մոտ 6-անգամյա աճով, և մեկ շնչին բաժին ընկնող եկամուտների ու սպառողական ծախսերի աճն ուղեկցվել է ծայրահեղ աղքատ և աղքատ բնակչության

<sup>4</sup> Բոլոր թվական տվյալները վերցված են ԱՎԾ հետևյալ տարեգործերից: 2003 թ.: էջ 50, 95, 215, 427, 2006 թ.: էջ 60, 96, 212, 428, 2009 թ.: էջ 62, 94, 210, 399, 2014 թ.: էջ 72, 106, 223, 411, ինչպես նաև ՀՀ ֆինանսների նախարարության կայքէջից (<http://minfin.am/index.php?lang=1>) և ՀՀ ԿԲ կայքէջից (<https://www.cba.am/am/SitePages/statrealsector.aspx>):

տեսակարար կշռի էական նվազմամբ: Աղքատության մակարդակը 2008-ին կազմել է 27,6%՝ 1999 50,0%-ի դիմաց:

**Աղյուսակ 1**  
**ՀՀ մակրոտնեսական ցուցանիշների շարժմանը 2008–2014 թթ.**

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Անվանական ՀՆԱ (մլն դոլար)	1162,0	8648,0	9260,3	10138,1	9910,1	10431,2	10888,8
ՀՆԱ իրական աճի հնդեքս (%)	6,9	-14,1	2,2	4,7	7,2	3,5	3,4
Մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ (դոլար)	3606,0	2666,1	2844,0	3363,0	3290,0	3452,0	3613,0
ՍԳԻ	5,2	6,5	9,4	4,7	3,2	5,8	3,0
Գործազրկության մակարդակ (%)	16,4	18,7	19,0	18,4	17,3	16,9	17,2
Աղքատների տեսա- կարար կշռ (%)	27,6	34,1	35,8	35,0	32,4	32,0	-

Այնինչ, ըստ աղյուսակ 1-ի տվյալների, հետձգնաժամային տնտեսական աճը չի ուղեկցվում նման զարգացումներով: Ավելին, այդ տարիներին, 2008 թ. համեմատությամբ, մեծացել է աղքատների տեսակարար կշիռը: Բացի այդ, եթե մինչև 2008 թ. ԶՀՄիի գործակիցը նվազել էր՝ 0,395-ից հասնելով մինչև 0,339-ի, վերջին տարիներին այն նորից վերադարնում է նախկին մակարդակին: Դա նշանակում է, որ ՀՆԱ դրական աճի տեմպերը, որոնք ձեռք են բերվել հետձգնաժամային տարիներին, ոչ միայն չեն նպաստել աղքատության կրծատմանը, այլև խորացրել են աղքատ և հարուստ խավերի եկամուտների տարրերությունը:

Աղյուսակում բերված թվերը վկայում են, որ հրչակված գերակայությունները հետձգնաժամային տարիներին չեն պահպանվել, և, ինչպես տնտեսական անկումը, այնպես էլ հետագայում վերականգնողական աճը նպաստել են միայն թնակչության ավելի ապահովված խավերի եկամուտների ավելացմանը: Հետևաբար՝ կարելի է փաստել, որ 2010–2014 թթ. հետձգնաժամային զարգացումներում թեև ՀՆԱ ծավալը, 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն և սպառողական ծախսերն աճել են, սակայն աղքատության ցուցանիշների վրա դրական ազդեցություն չեն թողել: Այսինքն՝ երկարաժամկետ ծրագրերում առաջադրված նպատակները չեն իրականացվել, իսկ հայտարարված գերակայությունները հակասության մեջ են եղել իրականացված քաղաքականության հետ:

Մյուս կողմից՝ նույնիսկ ամենաարդյունավետ քաղաքականության իրականացման պայմաններում գերակայությունների իրագործման գլխավոր պայմանը տնտեսական աճն է: Ուստի անհրաժեշտ է հետազոտել և առանձնացնել տնտեսական աճի մոդելներում ներառվող այն կարևոր գործոնները, որոնք կարող են էական նշանակություն ունենալ մեր հանրապետության տնտեսության հետագա զարգացման համար:

Հայտնի է, որ Ռ.Սոլոուի տնտեսական աճի դինամիկ հետազոտության մոդելը հնարավորություն է տալիս պարզելու, թե ժամանակի ընթացքում ինչպես են խնայողությունը, թնակչության աճը և տեխնոլոգիական առաջա-

դիմությունը ազդում արտադրության աճի վրա<sup>5</sup>: Մոդելի հիմքում արտադրական ֆունկցիան է.

$$Y = A F(K, L)$$

Փորձնականորեն ապացուցված է, որ տնտեսական աճի հետագծի դիտարկման ամենաիրական մեթոդը, որը համապատասխանում է հաշվեկշռված աճին, կապիտալի պաշարի և թողարկման ծավալի հավասար տեմպերով ավելացումն է: Այդ դեպքում Սոլոուի արտադրական ֆունկցիան մասնատվում է հետևյալ բաղադրիչների:


$$g = \Delta Y/Y = \Delta A/A + a \Delta K/K + (1-a) \Delta L/L$$

Եթե որպես էկզոգեն գործոններ դիտարկվեն տեխնիկական առաջադիմությունը ( $a = \Delta A/A$ ) և աշխատանքի առաջարկի ավելացումը ( $n = \Delta L/L$ ), ապա հաշվեկշռված աճի դեպքում  $\zeta_{SL}$   $g$  աճի տեմպի ավելացումը հավասարվում է կապիտալի կուտակման տեմպին ( $\Delta K/K$ ), այսինքն՝ նախորդ բանաձևից կարող ենք գրել.

$$g = n + (1/1-a) a$$

Հաշվեկշռված կայուն աճի տեմպի ժամանակ թողարկման աճը բացարկում է միայն երկու արտածին գործոններով՝ աշխատանքի ծախսումների աճի տեմպով և տեխնիկական առաջադիմությամբ:

Այս մոդելի համաձայն՝ կապիտալի կուտակումը, հետևաբար՝ խնայողությունները տնտեսական աճի կարևոր գործոն են: Սակայն, ինչպես տեսնում ենք, հաշվեկշռված կայուն աճի ժամանակ այդ կանխադրույթը չի գործում, քանի որ աճը պայմանավորված է միայն տեխնիկական առաջադիմությամբ և բնակչության աճով: Ուստի տնտեսական աճի այս մոդելում խնայողությունների նորմայի աճը հանգեցնում է միայն կապիտալ-թողարկում հարաբերության, այսինքն՝ արտադրության կապիտալատարության ավելացման: Իհարկե, հաշվեկշռված կայուն աճ դիտարկվում է շատ քիչ երկրներում: Այն երկրները, որոնք ծգտում են հասնել արագացված տեմպերով աճի, պետք է ապահովեն կապիտալի կուտակման բարձր տեմպեր: Ըստ այդմ՝ խնայողության նորմի հարցը խիստ կարևոր է, քանի որ, եթե դա նույնիսկ չաղդի տնտեսական աճի վրա, դրանով են որոշվում մեկ շնչի հաշվով եկամտի և սպառման մակարդակները:



Գօապատկեր 3. Խնայողությունը և սպառումը «ուսկե կանոնի» պայմաններում

<sup>5</sup> Ո.Սոլոուի տնտեսական աճի մոդելի առավել մանրամասն մեկնաբանությունը տես **Сакс Դ., Фелипը Լարրեն Բ.**, Макроэкономика. Глобальный подход. М., 1999, էջ 603–619:

Կատարելագործելով այս մոդելը՝ Եղմունդ Ֆելպսն ապացուցեց, որ գոյություն ունի խնայողությունների օպտիմալ մակարդակ<sup>6</sup>: Ինչպես նշեցինք, հաշվեկշռված կայուն աճի առկայության պայմաններում ՀԱԱ աճի տեմպը հավասարվում է կապիտալի աճի տեմպին: Հետևաբար՝ կապիտալի հավելածը կկազմի  $gk$ : Զեափոխելով Սոլոուի հայտնի բանաձևը՝  $y = c + i$ , կարող ենք գրել.  $c = y - gk$ :

Գրաֆիկից երևում է, որ բնակչության մեկ շնչի հաշվով սպառումը չափվում է մեկ շնչի հաշվով արտադրական ֆունկցիայի կողի և ներդրումների կողի միջև ընկած հեռավորությամբ՝ ուղղահայաց գծի վրա: Սպառման ամենաբարձր մակարդակը համապատասխանում է  $k^{**}$  կապիտալագին-վածության մակարդակին, եթե արտադրական ֆունկցիայի և ներդրումների կորերի թեքությունները համընկնում են: Այդ դեպքում սահմանային արտադրության մակարդակում է տնտեսական աճի տեմպին.

$$MPK = g$$

Այս բանաձևը հայտնի է որպես «ոսկե կանոն», որը սահմանում է խնայության այն միակ մակարդակը, որն ապահովում է կայուն աճ սպառման առավելագույն մակարդակով:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ի տվյալներից, Հայաստանը չի կարող համարվել կայուն, հավասարակշռված աճ ունեցող երկրների տարրերակին՝ բնակչության մեկ շնչի հաշվով կապիտալի փոքր ծավալով և բարձր սահմանային արդյունքով: Տեսականորեն, ըստ տեխնիկական առաջադիմության ռազմավարության, քանի որ նորամուծությունների ներմուծումը հարաբերականորեն էժան է, բոլոր երկրների արտադրական գործառույթները, վերջին հաշվով, պետք է ունենան միևնույն **A** անդամը: Հետևաբար՝ ավելի աղքատ երկրները կարող են ապահովել ավելի բարձր աճի տեմպեր՝ ներմուծելով և ավելի արդյունավետ օգտագործելով տեխնոլոգիաները: Քանի որ մեր հանրապետությունում կապիտալագինվածության մակարդակը ցածր է, դա բնութագրվում է կապիտալի բարձր սահմանային արդյունքով, ուստի գայթակղիչ է արտասահմանային երկրների համար: Սակայն շատ երկրների փաստացի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ ցածր կապիտալագինվածությունը բարձր տնտեսական տեմպերի լիարժեք երաշխիք չէ, և տեխնիկական առաջադիմությունը մեխանիկական գործընթաց չէ: Միայն տեխնոլոգիաների ներմուծումը չի կարող ապահովել տնտեսական աճ: Անհրաժեշտ է համապատասխան ռազմավարություն:

Այդ ռազմավարության կարևոր ուղղություններից մեկը տեխնիկական առաջընթացին զուգահեռ մարդկային կապիտալուն ներդրումներն են: Բանն այն է, որ աշխատանքը չափվում է աշխատած ժամերի քանակով՝ անկախ որակից: Եթե իրական արտադրական ֆունկցիան ընդունենք՝  $Y = AF(K, H, L)$ , ապա Սոլոուի մոդելի մասնատումը կարտահայտվի հետևյալ բանաձևով:

$$g = \Delta A/A + \alpha \Delta K/K + \beta \Delta L/L + \gamma \Delta H/H$$

Մարդկային կապիտալի, ֆիզիկական կապիտալի և աշխատանքի օգտագործման արդյունքը համապատասխանում է այն դեպքին, եթե  $\alpha + \beta + \gamma = 1$ :

<sup>6</sup> Տես **Phelps E.**, The Golden Rule of Accumulation: A Fable for Growthmen/American Economic Review, 1961, vol.51, էջ 638–643:

Մեր դատողություններում մարդկային կապիտալի ներդրումը փոխում է տեխնիկական առաջադիմությամբ պայմանավորված Սոլոուի մնացորդի բնույթը:

$$a' = \Delta A/A + \gamma \Delta H/H$$

Այս արտահայտությունը հաշվի է առնում նաև մարդկային կապիտալի կուտակման տեմպը: Որքան շատ խնայողություններ են ուղղվում երկրում մարդկային կապիտալի ներդրումներին, այնքան բարձր է լինում տնտեսական աճը: Այս հետևողությունը խիստ արդիական է մեր հանրապետության համար, քանի որ, ի տարբերություն բնակչության թվի ավելացման, նշված գործոնի օգտագործման հնարավորությունները մեզ մոտ բավական մեծ են:

Դրա մասին են վկայում նաև Հայաստանում իրականացված մի շարք հետազոտությունների արդյունքներ: Օրինակ՝ «ՀՀ մակրոտնտեսական իրավիճակի և տնտեսական իրավիճակի վրա մարդկային կապիտալի և միգրացիայի ազդեցության գնահատումը» հետազոտության մեջ տնտեսաչափական մոդելով կատարված հաշվարկների հիման վրա հեղինակները հաճգում են հետևյալ եզրակացության: «Քանի որ մարդկային կապիտալով մոդելներում տնտեսական աճը ներժին է, ապա եթե կրթության մեջ ռեսուրսների մեծ բաժին է ներդրվում, դա ավելացնում է երկարաժամկետ տնտեսական աճի տեմպերը»<sup>7</sup>: Այնինչ, ըստ Համաշխարհային բանկի 2013 թ. Հայաստանի վերաբերյալ «Կուտակում, մրցակցություն և միակցելիություն» գեկույցի՝ «Հատ ընկերություններ հաղորդում են, որ աշխատողների ցածր գիտելիքները գործարարությամբ զբաղվելու լուրջ արգելք են»<sup>8</sup>: Հետևաբար՝ աշխատուժի առաջարկի անբավարար որակը մարդկային կապիտալում ներդրումներ կատարելու կարևոր հրամայականն է մեր երկրում:

Նոյնը վերաբերում է նաև ենթակառուցվածքների զարգացմանը, որոնք ֆինանսավորվում են կառավարության կողմից: Դրանք, մարդկային կապիտալի պես, կարելի է ներառել արտադրական ֆունկցիայի մեջ և գտնել Սուլուի մնացորդի և մեկ բացատրություն: Մարդկային կապիտալի նման ենթակառուցվածքը ֆինանսավորվում է խնայողությունների հաշվին և առք ու վաճառքի առարկա չէ համաշխարհային շուկայում, ինչպես տեխնոլոգիաները: Ուստի տեխնոլոգիաների ներմուծումը պետք է ուղեկցվի ենթակառուցվածքների զարգացմամբ:

Այսպիսով՝ ընդհանրացնելով կատարված վերլուծությունը, կարելի է եզրակացնել, որ հանրապետության տնտեսական աճի ռազմավարությունը մշակելիս դրա հիմքում պետք է լինի հավասարակշռված կայուն տնտեսական աճի ապահովումը, որին հասնելու հիմնական ուղիներն են խնայողությունների նորմի օպտիմալացումն այն հաշվով, որ դա համապատասխանի «ոսկե կանոնի» պահանջներին, խնայողությունների խթանման քաղաքականությունը, ներդրումների հրականացումը ոչ միայն բարձր տեխնոլոգիաների ներմուծման, այլև մարդկային կապիտալի կուտակման և հանրապետության ենթակառուցվածքների զարգացման ձանապարհով:

<sup>7</sup> <https://www.cba.am/AM/panalyticalmaterialsresearches/Rolan%202010.pdf>, 2010, էջ 111:

<sup>8</sup> Կուտակում, մրցակցություն և միակցելիություն. մարդկային ռեսուրսներ, ՀԲ գեկույց, 2013, հուլիս, էջ 43:

**ԱЙКАԶ ՕԳԱՆԵՍՅԱՆ**

Доцент кафедры "Макроэкономики" АГЭУ,  
кандидат экономических наук

**МАРИАННА ОГАНЕСЯН**

Студентка кафедры "Макроэкономики" АГЭУ

**Роль экономического роста в приоритетах развития РА.** – Анализ динамики макроэкономических показателей РА и сочетание их с теоретическими основами моделирования экономического роста, привели к выводу, что для обеспечения сбалансированного, устойчивого экономического роста необходимо оптимизировать норму сбережений, осуществлять инвестиции с помощью не только импорта высоких технологий, но и накопления человеческого капитала и развития инфраструктуры.

**Ключевые слова:** приоритеты развития, коэффициент Джини, сбалансированный экономический рост, золотое правило, оптимизация нормы сбережений, человеческий капитал, инфраструктура.

**HAYKAZ HOVHANNISYAN**

Associate Professor at the Chair of  
"Macroeconomics" at ASUE

**MARIANNA HOVHANNISYAN**

Researcher at the Chair of  
"Macroeconomics" at ASUE

**The Role of Economic Growth in the Priorities of the RA.** – The analysis of the dynamics of macroeconomic indicators of the Republic of Armenia and their combination with the theoretical foundations of modeling of economic growth, have led to the conclusion that in order to ensure balanced, sustainable economic growth it is necessary to optimize the savings rate, to invest with the help of not only the import of high technologies, but also the accumulation of human capital and infrastructure development.

**Key words:** development priorities, the Gini coefficient, balanced economic growth, the golden rule, optimization of savings rate, human capital, infrastructure.